600.0163.16.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2018 թվականի №163Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՍԵՆ ՀՈՎԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր Արսեն Հովիկի Ավետիսյանի 2018 թվականի մայիսի 7-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր Արսեն Հովիկի Ավետիսյանի հայտը և Կոտայքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրել 5600-5605ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն՝ մինչև 2027 թվականի փետրվարի 22-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել անհատ ձեռնարկատեր Արսեն Հովիկի Ավետիսյանին Կոտայքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրվող 5600-5605ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Անհատ ձեռնարկատեր Արսեն Հովիկի Ավետիսյանին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում 900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով տրամադրված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
16 մայիսի 2018թ.
ժամը 16 ՝՝